ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«11» նոյեմբերի 2015թ. N 176

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1250-Ն որոշման պահանջներով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում ձմեռային զորակոչի ընդհանուր ղեկավարումն ապահովելու, ինչպես նաև զորակոչի անցկացման աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել տարածքային (Արմավիր, Էջմիածին) հանձնաժողովներ՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարածքային զինկոմիսարիատներին (Ա.Համբարձումյան Հ.Ազատյան)՝ ըստ զինկոմիսարյատների կողմից սպասարկվող տարածքների՝
   1) 2015 թվականի ձմեռային զորակոչն անցկացնել Հայաստանի Հանարապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N 1250-Ն որոշմամբ սահմանված կարգով (2015 թվականի նոյեմբեր-հունվար ամիսների ընթացքում):
   2) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից խուսափող քաղաքացիների վերաբերյալ նյութերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի դատախազություն:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների, կազմակերպությունների (անկախ կազմակերպական-իրավական ձևից) ղեկավարներին առաջարկել՝
   1) տվյալ տարածքը սպասարկող զինկոմիսարիատի պահանջով զորակոչիկներին ծանուցել զինկոմիսարիատ կանչելու մասին և աջակցել նրանց ներկայանալուն.
   2) քրեական պատասխանատվության կանչված և հետախուզման մեջ գտնվող զորակոչիկների ցուցակները ստանալուց հետո ապահովել բոլոր կազմակերպություններում նշված անձանց նկատմամբ աշխատանքային, տնտեսական և այլ ոլորտներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների անշեղ կիրառումը և այդ անձանց գտնվելու վայրի մասին անհապաղ իրազեկել իրավասու պետական մարմիններին:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը (ժ/պ՝ Վ.Ալեքսանյան) զորակոչային հանձնաժողովը համալրել համապատասխան բժիշկ մասնագետներով:
5. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչությանը (պետ՝ Ա.Այվազյան)՝
   1) ապահովել հասարակական կարգի պահպանումը մարզի զորակոչային տեղամասերում և զորակոչիկների անվտանգ տեղափոխումը.
   2) ապահովել մարզի տարածքում և տարածքից դուրս զորակոչից խուսափող զորակոչիկների որոնումն ու նրանց պարտադիր ներկայանալը զորակոչային տեղամասեր:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը (պետ՝ Ա.Ղուկասյան)՝ապահովել մարզի տարածքային զինկոմիսարիատներից պարբերական տեղեկատվություններ՝ զորակոչի ընթացքի վերաբերյալ:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչությանը (պետ՝ Կ.Դանիելյան)՝ ապահովել զորակոչիկների փոխադրումը զինկոմիսարիատներից հանրապետական հավաքակայան՝ ըստ զինկոմիսարիատների հայտերի:
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետ՝ Հ.Վարդանյան)՝ ընդլայնել ռազմահայրենասիրական աշխատանքների լուսաբանումը՝ հատուկ ուշադրության դարձնելով 2015 թվականի ձմեռային զորակոչի կազմակերպմանն ու անցկացմանը:
9. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային զորակոչային հանձնաժողովին և տարածքային զինկոմիսարիատներին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11
N 176 ՈՐՈՇՄԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

ԱՐՄԱՎԻՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Ա.Համբարձումյան - Արմավիրի տարածքային զինկոմիսար, հանձնաժողովի նախագահ

Հ.Պետրոսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ

Ս.Մովսիսյան - Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար

Ա.Սողոմոնյան - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Արմավիրի բաժնի պետի տեղակալ

Ա.Շիրինյան - ավագ բժիշկ

Բժշկական հանձնաժողով

Ա.Համբարձումյան - Արմավիրի տարածքային զինկոմիսար, հանձնաժողովի նախագահ
Ա.Շիրինյան - ավագ բժիշկ, թերապևտ
Բ.Փոդրատչյան - վիրաբույժ
Հ.Եփրեմյան - նյարդաբան
Ս.Ասատրյան - հոգեբույժ
Ք.Վարդանյան - ակնաբույժ
Ա.Սարգսյան - մաշկաբան
Մ.Ամիրջանյան - սրտաբան
Հ.Մարկոսյան - քիթ-կոկորդ-ականջ
Ա.Խաչատրյան - բուժքույր

ԷՋՄԻԱԾՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

Հ.Ազատյան	- Էջմիածնի տարածքային զինկոմիսար, հանձնաժողովի նախագահ
Ա.Սարգսյան	- Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Էջմիածնի բաժնի պետի տեղակալ
Ն.Հովհաննիսյան	- Էջմիածնի քաղաքապետի օգնական
Ա.Մուրադյան	- ավագ բժիշկ

Բժշկական հանձնաժողով

Հ.Ազատյան	- Էջմիածնի տարածքային զինկոմիսար,հանձնաժողովի նախագահ
Ա.Մուրադյան	- ավագ բժիշկ,ընտանեկան բժիշկ
Մ.Մկրտչյան	- քիթ-կոկորդ-ականջ
Ա.Բլդրյան	- վիրաբույժ
Լ.Կուծինյան	- նյարդաբան
Լ.Պողոսյան	- հոգեբույժ
Վ.Գրիգորյան	- ակնաբույժ
Լ.Եղիազարյան	- մաշկաբան
Ա.Լևոնյան	- սրտաբան
Կ.Ավետիսյան	- բուժքույր

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**